Հավելված 1
Հաստատված է
«ԱյԴի Բանկ» ՓԲԸ վարչության
2024 թվականի հուլիս 3-ի N 246-Լ որոշմամբ
Գործում է սկսած 2024 թվականի հուլիսի 8–ից

«3000 idcoin սինքրոնացման համար» արշավի իրականացման պայմաններ

1. Ընդհանուր դրույթներ.

1.1 **Արշավ՝** «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) կողմից 08.07.2024թ-ից 30.09.2024թ-ը ներառյալ իրականացվող արշավ:
1.2 **Քարտ՝** «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի կողմից թողարկված ցանկացած քարտ, որը պատվիրվել է Արշավի ընթացքում և ունի գործող կարգավիճակ: Ընդ որում, Քարտը կարող է պատվիրվել Idram&IDBank հավելվածի, idbanking.am, Banking.idram.am հարթակների, ինչպես նաև Բանկի մասնաճյուղերի կամ www.idbank.am կայքի միջոցով:
1.3 **Գործող հաճախորդ՝** Բանկի հաճախորդ, ով ունի գործող որևէ հաշիվ/պրոդուկտ/ծառայություն նախքան Idram&IDBank հավելվածի (idbanking.am կամ Banking.idram.am հարթակների) միջոցով Իդրամի և Բանկի հաշիվների սինքրոնացումը:
1.4 **idcoin՝** հավատարմության թվային միավոր, որը կուտակվում է Idram&IDBank հավելվածում և Idplus լոյալության հարթակում: Այն հնարավոր է օգտագործել Idram&IDBank հավելվածում և Idplus լոյալության հարթակում QR վճարում կատարելու միջոցով:
1.5 Արշավին մասնակցելու դեպքում հաճախորդն անվերապահորեն ընդունում է սույն Պայմանները և Դրույթները, որոնք համարվում են վերջնական և անվիճարկելի:

2. Արշավի պայմաններ.

2.1 Արշավի շրջանակներում՝ 08.07.2024թ-ից 30.09.2024թ-ը ներառյալ 3000 idcoin կստանան.

- Բանկի Գործող հաճախորդները, ովքեր արշավի ընթացքում Idram&IDBank հավելվածի, idbanking.am կամ Banking.idram.am հարթակների միջոցով կսինքրոնացնեն Իդրամի և Բանկի հաշիվները:
- Նոր հաճախորդները, ովքեր արշավի ընթացքում կգրանցվեն Idram&IDBank հավելվածում, idbanking.am կամ Banking.idram.am հարթակներում, կսինքրոնացնեն Իդրամի և Բանկի հաշիվները և 15 օրացույցային օրվա ընթացքում կպատվիրեն Քարտ(եր): Քարտերի տրամադրման և սպասարկման այլ պայմանները սահմանված են համապատասխան Քարտերի տեղեկատվական ամփոփագրերով:

2.2 Մեկ հաճախորդին սույն Արշավի ընթացքում տրամադրվում է առավելագույնը 3000 idcoin:
2.3 idcoin-երը կտրամադրվեն պարբերաբար մինչև 10.10.2024թ-ը ներառյալ՝ սույն Արշավի պայմաններին բավարարելուց հետո 10 աշխատանքային օրերի ընթացքում:

2.4 Հաճախորդների կողմից Արշավին մասնակցությունը կատարվում է ավտոմատ կերպով և լրացուցիչ գործողություն չի պահանջվում:
2.5 idcoin-ի տրամադրման և սպասարկման կանոնները տեղադրված է հետևյալ հղմամբ՝ https://idbank.am/upload/iblock/666/noa9o21tx3o9xjdwixalavk3odyu0qj7/IDcoinTC_final.pdf :
2.6 Բանկն իրավունք ունի սույն պայմանների և դրույթների մեջ ցանկացած պահի կատարել միակողմանի փոփոխություն և կիրառել փոփոխությունն անմիջապես՝ Բանկի պաշտոնական կայքում հրապարակելուց հետո: